

Հիմնական լրակազմի "ԷԼ" մականիշի աշխատանքային գծագրերի ամփոփագիր

Թերթ	Անվանում	Ծանոթագրութ.
1	Ընդհանուր տվյալներ	
2	Էլեկտրասարքավորումների և նյութերի մասնագիր	
3	Սնող-բաշխիչ ցանցեր ~380/220 V: Սկզբունքային էլեկտրասխեմա	
4	Լուսավորության էլեկտրասարքավորումների բաշխումը նկուղի հատակագծում	
5	Լուսավորության էլեկտրասարքավորումների բաշխումը 1-ին հարկի հատակագծում	
6	Լուսավորության էլեկտրասարքավորումների բաշխումը 2-րդ հարկի հատակագծում	
7	ԲՎ-1 հաշվարկային սխեմա	
8	ԲՎ-2 հաշվարկային սխեմա	
9	ԲՎ-3 հաշվարկային սխեմա	
10	ԲՎ-4 հաշվարկային սխեմա	
11	Ռեժային էլեկտրասարքավորումների բաշխումը 1-ին հարկի հատակագծում	
12	Ռեժային էլեկտրասարքավորումների բաշխումը 2-րդ հարկի հատակագծում	

Առաջարկվող և վկայակոչվող փաստաթղթերի ամփոփագիր

Նշանակում	Անվանում	Ծանոթագրութ.
	<u>Վկայակոչվող փաստաթղթեր</u>	
5.407-112	Լուսավորության խմբային վահանակների տեղակայումը:	
5.407-11	Էլեկտրակայանքների հողակցումն ու զրոյակցումը:	

Աշխատանքային նախագիծը մշակված է գործող նորմերի ու կանոնների համաձայն և նախատեսում է պայթյունաանվտանգության, հրդեհաանվտանգության միջոցառումներ շինություններն ու կառույցները շահագործելիս:

ՆԳԻ Ս. Աբուպյան

ԸՆԴԻՊԱՆՈՒՐ ԳՈԼԳՈՒՄՆԵՐ

Դպրոցի ներքին էլեկտրասարքավորումների (լուսավորության և ուժային սարքավորումների) սույն նախագծի մշակման համար ծառայել են հետևյալ ելակետային փաստաթղթերն ու տվյալները.

ա. ճարտարապետա-շինարարական առաջադրանքը,

բ. նախագծային առաջադրանքը,

գ. տեխնոլոգիական և նախագծի ճարտարագիտական մասերի առաջադրանքը:

Օբյեկտի (դպրոցի) էլեկտրաընդունիչների պահանջվող հզորությունն է 25 kW, իսկ լարումն ընդունված է՝ ~380/220 V, տրանսֆորմատորի խուլ հողանցման չեզոքով (էլկտրասնման նախագիծը անհրաժեշտ է պատվիրել «ՅԷՑ» ՓԲԸ-ին):

Համաձայն նախագծային առաջադրանքի նախատեսված է.

1-ին հարկուն տեղադրել ավտոմատ անջատիչներից կազմված ՈՐ11 սերիայի գլխավոր բաշխիչ վահանը (ԳԲՎ-1):

Տեխնոլոգիական և ճարտարագիտական էլեկտրաընդունիչների էլեկտրամատակարարման, ինչպես նաև ներքին լուսավորության նպատակով նախատեսված է տեղադրել թ.1...թ.4 բաշխիչ վահանները (ԲՎ-1... ԲՎ-4), կազմված Legrand տիպի ավտոմատ անջատիչներից:

Համաձայն ՀՊՅՈՒՄ-2003 «Բնակելի և հասարակական շենքերի նախագծումն ու մոնտաժը» սահմանված կանոնների հրահանգի 9.1-րդ գլխի միաֆազ խմբային գծերը անհրաժեշտ է իրականացնել 3-լարանի, իսկ եռաֆազ խմբային գծերը՝ 5-լարանի՝ առանձին N և PE հաղորդագծերով: Որի համաձայն սնող և բաշխիչ ցանցերը նախատեսված են պղնձե 5-լարով հաղորդագծերով՝ անցկացրած ՊՎՔ խողովակներով պատերով և առաստաղներով՝ փակ սվաղի տակ:

Մնող և բաշխիչ ուժային ցանցերի գծերը նախատեսված է ՌԵ մակնիշի հաղորդալարով, անցկացրած պատերով՝ ՊՎՔ խողովակով՝ փակ - սվաղի տակ պատերով և հատակով (տես թերթ ԷԼ-3):

Լուսատեխնիկական հաշվարկները կատարված են «Լուսավորության հաշվարկ» էլեկտրոնային հատուկ ծրագրով, ելնելով սենյակների երկրաչափական չափերից, լույսի անդրադարձման և այլ պարամետրերից, իսկ սենյակների լուսավորվածությունն ընդունված է համաձայն ՀՀՇՆ II-8.03-96 «Բնական և արհեստական լուսավորում» շինարարական նորմերում բերված լուսավորության նորմատիվ արժեքների: Լուսատուներն (ԱՊՅ-ի, ՀՀ-ի տարածքում առաքվող) ընդունված են հիմնականում լյումինեսցենտե լուսատուներով՝ համաձայն նախագծային առաջադրանքի:


Ներքին լուսավորության ցանցերն ընդունված է ՈՒՅ-2x2.5 մմ<sup>2</sup> մակնիշի ու կտրվածքի հաղորդալարով, անցկացրած պատերով և առաստաղով՝ փակ սվաղի տակ:

Վարդականին ցանցերը ընդունված է ՈՒԲ-3x4 մմ<sup>2</sup> մակնիշի ու կտրվածքի հաղորդալարով, անցկացրած պատերով՝ ՊՎՔ խողովակի մեջ՝ փակ սվաղի տակ:

Մարդկանց էլեկտրական հոսանքից խոցելուց պաշտպանելու նպատակով նախատեսված է վարդակային գծի սկզբում՝ ք/վահանակներում (ԲՎ-1... ԲՎ-4) տեղակայել պաշտպանիչ անջատման սարքեր (ՄՅՕ):

Անջատիչները առաջարկվում է տեղադրել հատակից 0.9 մ, վարդակները՝ 0.8 մ բարձրությունների վրա:

Էլեկտրամոնոստաժային աշխատանքները անհրաժեշտ է կատարել տեխնիկական կանոնակարգերի և ՀՀ-ում գործող այլ կանոնների ու նորմերի համաձայն, պահպանելով աշխատանքի անվտանգության կանոնները:

ՏՈՒՐԵՆ	II. ԲԻՐԱՅՈՒՆ		ԱՆԹԱԼԱՅԻ ԹԻՎ 2 ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ			
ԴԵՏ	II. ԲԻՐԱՅՈՒՆ					
ԴԻՐ	II. ԲԻՐԱՅՈՒՆ			ՓՈՒՎ	ԹԵՐԹ	ԹԵՐԹԻ
ԴԵԿԱՆՏ	II. ՎԻՄՔՆԵՆ			Ա	Է-1	12
			ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ	«ՇԻՆԵՔՐՈՒՄ» ԽՈՎ		
				ք. Կանաձոր 2016թ.		